

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Խ.ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

A 19.00.05  
Ա-77

ԱՎԱԳԻՄՅԱՆ

ՀԱՅԿ

ՈՌԴԻԿԻ

ՈՒՍԿԻ ԽՄԲԻ ԱՆՉԱՓԱՀԱՄԱՆԵՐԻ ԴԵՎԻԱՆՏ ՎԱՐՔԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԵՎ  
ՀՈԳԵՇՏԿՄԱՆ  
ՀՈԳԵՔԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

ԺԹ.00.05 «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն»  
մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ-2009

Ատենախոսության բեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր Ս.Ջ. Արզումանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր Վ.Ս. Կարապետյան

հոգեբանական գիտությունների թեկնածու Է.Ա. Ջաքարյան

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2009թ.-ի հունվարի 27-ին ժամը 14.00-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՂ-ի 060 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 375010, ք.Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2008թ. դեկտեմբերի 27-ին

060 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների թեկնածու՝ Վ.Ժ.Սարգսյան



05-2009

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ռիսկի խմբի անչափահասների դեհանտ վարքը այն հոգեբանամանկավարժական խնդիրներից է, որը մշտապես հուզել է հասարակությանը: Տարբեր ժամանակաշրջաններում բազմաթիվ գիտնականներ՝ իրավաբաններ, հոգեբաններ, մանկավարժներ և սոցիոլոգներ բազմիցս անդրադարձել են անչափահասների շեղվող վարքին և տարբեր մոտեցումներ են դրսևորել այդ խնդրի լուծման նկատմամբ: Ռիսկի խմբի անչափահասների դեհանտ վարքը միշտ էլ հրատապ լուծում պահանջող խնդիր է եղել, այն հիմա էլ հասարակությանը հուզող ամենակարևոր խնդիրներից մեկն է: Ժամանակի ընթացքում փոխվել են նույնիսկ այդ երևույթը բնութագրող հասկացությունները՝ «դժվար» դեռահասներից մինչև հատուկ կարիքներով դեռահասներ, դեհանտ վարքով ռիսկի խմբի անչափահասներ և այլն: Այս համատեքստում առաջնային են դառնում դեհանտ վարքով անչափահասների ախտորոշման և հոգեշտկման հոգեբանամանկավարժական պայմանների հիմնահարցը: Հայաստանում այդ հիմնախնդրի լուծումն ունի մի քանի կարևոր պատճառներ: Դրանք են՝ դեռևս չավարտված պատերազմը Արցախում և սահմանամերձ գոտիներում, 1988թ.-ի ավերիչ երկրաշարժը և դրանցից առաջացած տարբեր սոցիալական, տնտեսական և հոգեբանական հետևանքները, դրանցով պայմանավորված երեխաների մուրացկանությունը, թափառաշրջիկությունը, մանկավարժական և սոցիալական բարձիթոդությունը, մարմնավաճառությունը և այլն:

Հոգեբանական գիտության մեջ ռիսկի խմբի անչափահասների դեհանտ վարքի հոգեբանական առանձնահատկությունների նկատմամբ ուսումնասիրությունն ունի խորն արմատներ: Դեհանտ վարքի տեր անչափահասների հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափությունները և յուրահատկություններն ուսումնասիրվել են մի շարք հոգեբանների և սոցիոլոգների կողմից (Պ.Պ.Բլոնսկու (1930), Վ.Պ.Կաշչենկոյի (1936), Լ.Ս.Վիգոտսկու (1936, 1983, 1996), Լ.Ս.Սլավինայի (1966), Լ. Կոշչի (1974), Լ.Ս. Ջյուրինի (1982), Ս. Ռատտերի (1984), Կ.Ս.Լեբեդինսկայայի, Ս.Ս.Ռայսկայայի, Գ.Վ Գրիբանովայի (1988), Դ.Ի.Ֆելդշտեյնի (1989), Վ.Գ.Ստեպանովի (1991), Լ.Պոժարի (1996), Ա.Ա.Բելիչևայի (1993), Գ.Վ.Սաֆինայի (1993), Է.Էրիկսոնի (1993), Ի.Ա.Գորկովայայի (1994), Ի.Ա.Նևսկու (1996), Ա.Ջ.Արզումանյանի (1980; 1994; 2002) և այլոց):

Հետազոտության արդիականությունը կայանում է նրանում, որ վերոհիշյալ հեղինակները ռիսկի խմբի անչափահասների դեհանտ վարքի ախտորոշման և հոգեշտկման հոգեբանամանկավարժական պայմաններն ուսումնասիրել են՝ նրանց վարքի շեղման վրա հասարակության մեջ առկա տարբեր նեգատիվ և պոզիտիվ ազդեցությունների համատեքստում (ընտանիք-դեհանտ անչափահաս, ուսուցիչ-դեհանտ անչափահաս, նորմալ անչափահաս- դեհանտ անչափահաս, «ռիսկի» խումբ-դեհանտ անչափահաս օղակներում): Անհրաժեշտ մակարդակով չեն բացահայտվել այն հիմնական հոգեբանական խոչընդոտները և դժվարությունները, որոնք կարող են կապված լինել տվյալ տարածաշրջանում առկա (աղետի, հետադեպության և այլն) խնդիրների հետ: Սինչդեռ խնդրի առարկայի մեր կողմից ձեռնարկված մանրակրկիտ մենագրական հետազոտությունը թույլ կտա բացահայտել և կանխարգելել անչափահասների դեհանտ վարքի ձևավորումը տվյալ կոնկրետ տարածաշրջանում, անհրաժեշտության դեպքում կազմակերպել համապատասխան հոգեշտկողական աշխատանք:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԿԱԾԻ համաձայն, ռիսկի խմբի անչափահասների դեհանտ վարքի վրա առաջին հերթին մեծ ազդեցություն ունեն այն օբյեկտիվ հոգեբանամանկավարժական գործոնները, որոնք պայմանավորվում են միկրոմիջավայրի ընտանիքի, հասակակիցների, դպրոցի անբարենպաստ

ներգործությամբ: Ռիսկի խմբի անչափահասների ղեկանտ վարքի ախտորոշումը և հոգեշտկումը փոխկապակցված գործընթաց է, որտեղ կարևորվում են հարաբերությունները ծնողների, ուսուցիչների և հասակակիցների հետ:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ.** Ռիսկի խմբի անչափահասների ղեկանտ վարքի պատճառակառուցումն է և դրանց նախազգուշացման և հաղթահարման հոգեբանական ուղիների առաջադրումը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ.** Ռիսկի խմբի անչափահասների ղեկանտ վարքի հոգեբանամանկավարժական առանձնահատկությունների և հասարակության մեջ նրանց սոցիալական փոխհարաբերությունների ուսումնասիրումն է:

**ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ** է բացահայտել: Ռիսկի խմբի անչափահասների ղեկանտ վարքի հոգեբանամանկավարժական գործոնները և դրսևորման առանձնահատկությունները, ինչպես նաև առաջադրել անչափահասների ղեկանտ վարքի հոգեախտորոշման և հոգեշտկման հոգեբանամանկավարժական պայմանները:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ.**

1. Ուսումնասիրել խնդրո առարկայի շուրջ հոգեբանական, սոցիոլոգիական և հոգեբանամանկավարժական գրականությունը և վերլուծել ղեկանտ վարքի մասին գիտական մոտեցումները:

2. Կատարել ղեկանտ և նորմատիվ վարքի դրսևորումների համեմատական վերլուծություն և առանձնացնել դրանց առանձնահատկությունները:

3. Տալ Ռիսկի խմբի անչափահասների ղեկանտ վարքի ընդհանուր հոգեբանամանկավարժական և սոցիալ- հոգեբանական բնութագիրը:

4. Բացահայտել անչափահասների ղեկանտ վարքի հոգեբանամանկավարժական պատճառակառուցումը:

5. Ռիսկի խմբի անչափահասների վարքի փորձարարական ուսումնասիրության հիման վրա բացահայտել նրանց ղեկանտ վարքի առաջացման սոցիալ- հոգեբանական պայմանները:

6. Բացահայտել անչափահասների ղեկանտ վարքի կանխարգելման, հոգեախտորոշման և հոգեշտկման հոգեբանամանկավարժական պայմանները:

7. Մշակել մեթոդական հանձնարարականներ երախաների ղեկանտությունը կանխորոշելու և հաղթահարելու համար:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՍՁԵՐԸ.**

Ուսումնասիրության մեջ բարձրացված խնդրի լուծմանը մասնակցում են ընդհանուր հոգեբանությունը, սոցիոլոգիան, տարիքային և մանկավարժական հոգեբանությունը, սոցիալական հոգեբանությունը: Այդ պատճառով ուսումնասիրության մեթոդաբանական հիմք են ծառայել **Է.Կյուրթեյմի, Մ.Վեբերի, Թ.Փարսոնսի, Պ.Սորոկինի, Ռ.Կլաուրդի, Լ.Օուլինի, Կ.Ռոջերսի, Ա.Մասլոուի, Վ.Ֆրանկլի, Զ.Ֆրոյդի, Ա.Ադլերի, Կ.Յունգի, Է.Թորնդայկի, Զ.Ուոթսոնի, Բ.Սքինների, Ա.Բանդուրայի, Լ.Ա.Վիգոտսկու, Ա.Ջ.Արգուլմանյանի** տեսական հիմնադրույթները և հիմնարար հետազոտությունները ղեկանտ վարքի առաջացման, կառուցվածքի և պատճառակառուցման վերաբերյալ:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ:** Հետազոտության մեջ օգտագործվել են. փաստաթղթերի վերլուծության մեթոդը, գրույցի մեթոդը, դիտման մեթոդը՝ հետազոտ ուսումնասիրության համար անչափահասների ընտրանքն առանձնացնելու նպատակով: Այնուհետև, հետազոտության խնդիրներին համապատասխան կիրառվել են հետևյալ մեթոդները՝ **K-SADS** կիսակառուցակարգված (կիսաստանդարտացված) ախտորոշիչ հարցազույցը, Այզենկի անձնային թեստը **EPI (Eysenck Personality Inventory)**, անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ախտորոշման մեթոդիկա (ըստ Կ.Թոմասի), Ա.Բասի և Ա.Դարկիի ագրեսիայի տիպերի և

ցուցանիշների ախտորոշման մեթոդիկան, Պ.Ֆրիկի և Տ.Ալխենբախի «դիտման թերթերի» լրացման մեթոդը, կատարված դաստիարակի և ուսուցչի կողմից:

Հետազոտության մեջ ընդգրկվել են 160 անչափահասներ, որոնք կազմել են 2 խումբ: Առաջինը ընդգրկել է նորմատիվ վարքի տեր անչափահասներ, որն այսուհետ պայմանականորեն կանվանենք «նորմա» խումբ: Մյուսները մտել են «ռիսկի» խմբի մեջ: «Նորմա» խումբը կազմեցին միևնույն տարիքի 80 (35 տղա և 45 աղջիկ) անչափահասներ, նորմատիվ վարքով, Վանաձորի թիվ 1, 6, 11 դպրոցներից: «Ռիսկի» խմբի անչափահասների ընտրությունը (80 մարդ. 35 տղա և 45 աղջիկ) կատարվել է Վանաձորի մանկատան, Վանաձորի թիվ 2, Վանաձորի թիվ 3, Ստեփանավանի թիվ 1 և Սպիտակի «Որբ, ծնողական խնամքից զրկված, մտավոր թերզարգացում ունեցող երեխաների» թիվ 1 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում գտնվող երեխաներից:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ** այն է, որ ստացված արդյունքների վերլուծությամբ բացահայտված գիտական նոր տվյալներն ու օրինաչափությունները կարող են նպաստել Ռիսկի խմբի անչափահասների շեղվող վարքի առաջացման պատճառների ախտորոշման, կանխարգելման և հոգեշտկման հիմնադրույթների ու հայեցակետերի մշակմանը, ինչպես նաև հարստացնում են շեղվող սոցիալական վարքի հիմնադրույթի շրջանակներում դեյինկվենտ անձի կազմավորման սկզբնափուլի մասին ունեցած մեր տեսական պատկերացումները:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԻՐՎՈՒԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ** այն է, որ գործնական առումով հետազոտության արդյունքները կարող են արդյունավետորեն օգտագործվել ինչպես դաստիարակչական, դեռահասության և պատանեկության շրջանում իրավախախտումների ու հանցագործությունների կանխարգելման, այնպես էլ ուղղիչ- դաստիարակչական աշխատանքները կազմակերպելիս: Ստացված արդյունքները կօգնեն համարժեք դարձնել անհատական մոտեցման սկզբունքներն ու մեթոդները քրեածին միտումներ ունեցող անչափահասների նկատմամբ: Հետազոտության արդյունքները կարող են հիմք ծառայել մանկավարժական բուհերում «Ղեկանտության հոգեբանություն» հատուկ դասընթաց կարդալու համար, ինչպես նաև դրանք օգտակար կլինեն ծնողներին և մանկավարժներին երեխաների շեղվող վարքը նախականելու և հաղթահարելու համար:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ** արտահայտվում է հետևյալում. մեր հանրապետությունում դեռահասների և պատանիների իրավախախտումներն ու հանցագործությունները, դրանց ծնող պատճառներն ու նպաստող պայմանները հոգեբանամանկավարժական վերլուծության դեռևս չեն ենթարկվել: Մասնավորապես նորույթ է, որ խնդրո առարկա է դարձել Լոռու մարզի սոցիալական, հոգեբանամանկավարժական հետևանքների և 14-17 տարեկան անչափահասների վարքի շեղումների կապի առանձնահատկությունների բացահայտումը: Հետազոտության մեջ առաջին անգամ փորձարարական ճանապարհով ուսումնասիրված են անչափահասների «նորմատիվ» և «ռիսկի» խմբի շեղվող վարքի պատճառակառուցումը՝ նոր հոգեբանական ախտորոշիչ մեթոդիկաների օգնությամբ:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ և ՏԿՅԱԼՆԵՐԻ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ:** Հետազոտության կազմակերպման ընթացքն ու ստացված արդյունքները պարբերաբար քննարկվել են Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի «Հոգեբանության և սոցիոլոգիայի» և Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ «Ձարգացման և կիրառական հոգեբանության» ամբիոններում: Ստացված արդյունքների հավաստիությունն ու հուսալիությունն ապահովված են ընտրված մեթոդաբանական հիմքերով և սկզբունքներով, օգտագործված բազմաթիվ մեթոդներով, ուսումնասիրված անչափահասների քանակով, տվյալների որակական և քանակական վերլուծություններով:

**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ:**

1. Շեղվող վարքը կարող է լինել բազմաթիվ անբարենպաստ գործոնների հետևանք, այն կարող է նաև կապված լինել ներանձնային կոնֆլիկտների և ոչ համարժեք հոգեբանական պաշտպանության հետ, կարող է լինել նաև ընտանեկան դիսֆունկցիայի արդյունք, և վերջապես անցանկալի վարքը կարող է պարզապես դառնալ անցանկալի սովորություն, գործողություն: Այդպիսի վարքը բարդ և բազմաշերտ է, ուստի և հոգեբանամանկավարժական հետազոտության հիմնախնդիր է:

2. Շեղվող վարքով ռիսկի խմբի անչափահասների մոտ ընտանեկան անբարենպաստության գործոնները և ընտանեկան էկոլոգիայի խախտումները կանխորոշում են վարքային խախտումների զարգացումը: Շեղվող վարքի զննեզիսը և հետագա զարգացումը ճիշտ հասկանալու համար այն պետք է համեմատել նորմատիվ սոցիալական վարքի հետ:

3. Ռիսկի խմբի անչափահասների ընդհանուր հոգեբանամանկավարժական բնութագրում նկատվում են սոցիալական էկոլոգիայի խախտման դեպքերի, ընտանեկան հարաբերությունների, հասակակիցների հետ հարաբերությունների, ընտանիքում երեխաների քանակի վերաբերյալ ցուցանիշների ու հիպերակտիվության և ուշադրության խախտման համախտանիշների փոխկապակցվածություն վարքային դևացիաների հետ:

4. Ռիսկի խմբի անչափահասների դեհանտ վարքն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ կամ հոգեբանական պատճառակառուցություն: Ելնելով տարիքային զարգացման առանձնահատկություններից դեհանտության և պատանեկության շրջանում՝ անձնային անբարենպաստ գործոնները գերակայում են օբյեկտիվ գործոնների վրա, ինչը պահանջում է հոգեբանամանկավարժական համարժեք անհատական մոտեցման մշակում:

5. Շեղվող վարքի կանխարգելումը ենթադրում է ընդհանուր և հատուկ միջոցառումների համակարգ սոցիալական կազմակերպության տարբեր մակարդակներում: Հոգեբանական կանխարգելիչ աշխատանքի տարբեր ձևերի միջոցով սոցիալական միջավայրի կազմակերպումը, իրազեկումը, սոցիալապես նշանակալի հմտություններին ակտիվ սոցիալական ուսուցումը, շնչվող վարքին այլընտրանքային գործունեության, առողջ ապրելակերպի կազմակերպումը կարող է նպաստել շեղվող վարքի նեգատիվ հետևանքների նվազեցման:

6. Հոգեշտկողական և դաստիարակչական ծրագրերում պետք է հաշվի առնվի այն, թե որքան բարձր է արտահայտված անչափահասների հոգեբանական անբարենպաստությունը ռիսկի խմբում: Անպայման անհրաժեշտ է հաշվի առնել հոգեախտաբանական գործոնների ազդեցության հնարավորությունը դեղինկվենտ վարքի զարգացման մեջ:

7. Շեղվող վարքով անչափահասների հետ հոգեշտկողական աշխատանքում անհրաժեշտ է առաջնորդվել նրանց մոտ որոշակի դրական հոգեբանական դիրքորոշում առաջացնելու, ձևավորելու անհրաժեշտությանը, որին կարելի է հասնել զլխավորապես կամային որակների զարգացման միջոցով:

8. Վարքում դեհանտների արտահայտվածության աստիճանից և սոցիալական ենթատեքստի առանձնահատկություններից կախված՝ անհրաժեշտ է ընտրել անչափահասների վրա հոգեբանամանկավարժական ներգործության օպտիմալ ռազմավարություն, անչափահասի անհատական զարգացման օպտիմալ հետազոծի որոշում: Դա ենթադրում է ռազմավարությունների համակցություն, որոնք ուղղված են անցյալում կատարված սխալների, ներկայում նրանց վարքային հետևանքների շտկմանը, ինչպես նաև ռազմավարություններ, որոնք կողմնորոշված են

անչափահասին օգնել նրա անձնային առանձնահատկություններին համարժեք ապագայի կառուցման գործում, ինքնադրսևորմանը և ինքնաիրականացմանը:

**ԱՄՆԱԽՈՒՄՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԾԱՎԱԼԸ:** Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, մեթոդական հանձնարարականներից, ընդհանուր եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ընդհանուր ծավալը կազմում է 158 էջ:

**ԱՄՆԱՍԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, առաջադրված է հետազոտության գիտական վարկածը, ձևակերպված են հիմնական նպատակը, խնդիրները, տեսամեթոքբանական հիմքերն ու մեթոդները: Ներկայացված են տեսական և կիրառական նշանակությունը, աշխատանքի գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին՝ «Անչափահասների ռիսկի խմբերը հոգեբանական հետազոտության հիմնախնդիր» գլուխը նվիրված է ռիսկի խմբերի անչափահասների շեղվող վարքի հիմնախնդրի տեսական հիմքերի բնութագրմանը:

Հիմնվելով «շեղվող վարք» հասկացության մասին սոցիոլոգներ Օ. Կոնտի, Գ. Թարրի, Ա. Քեթչի, Է. Դյուրքհեյմի, Ս. Վեբերի, Թ. Փարսոնսի, Ռ. Մերտոնի և հոգեբաններ Կ.Ռոջերսի, Ա.Մասլոուի, Վ.Ֆրանկլի, Ջ.Ֆրոյդի, Ա.Ադլերի, Է. Ջ. Ռոթսոնի, Բ.Սքինների, Կ.Լևինի, Ա.Լեոնտևի, Լ. Ս. Վիգոտսկու, Ս.Ջ.Արզումանյանի տեսական հայացքների վրա՝ ցույց է տրված, որ ռիսկի խմբերի անչափահասների շեղվող վարքի հոգեբանամանկավարժական գործոնները անհրաժեշտ է դիտարկել որպես անձի և միջավայրի միջև փոխներգործության գործընթաց և արդյունք:

Գլխի առաջին դրվագը նվիրված է ռիսկի խմբի անչափահասների տեսամեթոքբանական հիմքերի բնութագրմանը: Այստեղ քննարկվել են անվանի հոգեբաններ և սոցիոլոգներ Թ.Փարսոնսի, Պ.Սորոկինի, Լ.Օուլինի, Ռ.Կլաուրդի, Է.Լեմերտի, Գ.Բեքերի, Սազերլենդի, Չ.Լոմբրոզոի, Ռ.Շեղոնի, Չ.Դարվինի, Կ.Լորենցի, Ֆ.Գալտոնի, Գ.Մենդելի, Ռ.Պիրսի, Ա.Թորգերսենի, Կ.Լյուիսի, Կ.Ռոջերսի, Ա.Մասլոուի, Վ.Ֆրանկլի, Ջ.Ֆրոյդի, Ա.Ադլերի, Կ.Յունգի, Է.Թորնդայկի, Ջ.Ռոթսոնի, Բ.Սքինների, Ա.Բանդուրայի, Ա.Բեկի, Ա.Էլիսի, Լ.Ս.Վիգոտսկու, Ս.Ջ.Արզումանյանի տեսական դրույթները:

Երկրորդ դրվագում վերլուծվում են ռիսկի խմբի անչափահասների հիմնախոդի նկատմամբ մոտեցումները տարբեր ժամանակաշրջաններում՝ սկսած անտիկ դարերից մինչև մեր օրերը, իսկ երրորդ դրվագում քննարկվում են «ռիսկի» խումբ հասկացության մեկնաբանությունները հոգեբանական տարբեր դպրոցների ներկայացուցիչների մոտ:

Ընդհանրացնելով հիմնախնդրին առնչվող հետազոտությունների տեսական վերլուծությունը՝ հանգել ենք սույն եզրակացությունների.

1. Թեկուզ դեհանտ վարքի հոգեբանական հիմնախոդը դարավոր պատմություն ունի ու այսօր էլ առավել այժմեական է և կարոտ է հիմնարար հետազոտության:
2. Դեհանտ լուրջ սոցիալ-հոգեբանական համեմատական վերլուծության չեն ենթարկվել դեհանտ և նորմատիվ վարքի դրսևորումները, ինչը դժվարեցնում է շեղվող վարքի պատճառակառուցության զննեզիսի իմաստավորումը:
3. Սոցիոլոգիական և որանց մոտ սոցիալ-հոգեբանական տեսությունները դեհանտ վարքը դիտարկում են որպես սոցիալական գործընթացների, հասարակության և կոնկրետ անհատի միջև բարդ հարաբերությունների արդյունք, ինչն օգնում է հիմնախնդրի լուծումը գիտական հիմքերի վրա դնել:
4. Հասարակության մեջ դեհանտ առկա են լուրջ օբյեկտիվ պատճառներ շեղվող վարքի համար. սոցիալական ապակազմակերպվածությունը և սոցիալական ու

իրավական անպաշտպանվածությունը, անենաթողությունը, անպատժելիությունը, հանցավորությունը, անբարոյականությունը, սոցիալական անհավասարությունը և այլն, որոնք խոչընդոտում են կոնկրետ մարդու անհատականության ձևավորմանը և գնահատմանը նրա անձի սոցիալականացման գործընթացում:

Ստենախոսության երկրորդ՝ Ռիսկի խմբի անչափահասների դեֆինիտ վարքի փորձարարական ուսումնասիրություն» գլխում մեկնաբանվում են ռիսկի խմբի անչափահասների ընդհանուր հոգեբանական բնութագիրը, հետազոտության մեջ օգտագործվող հասկացությունները, դրանց կիրառման սահմանները, այնուհետև ընդարձակ մեկնաբանվում են փորձարարական ուսումնասիրության կազմակերպման պայմանները, ներկայացվում է հետազոտության մեթոդական ապարատը, ներկայացվում են հետազոտության արդյունքները և ամփոփվում են արդյունքների հոգեբանական վերլուծությամբ:

Ռիսկի խմբի անչափահասների դեֆինիտ վարքի ընդհանուր հոգեբանական բնութագիրը դրվագում ներկայացված են դեֆինիտ վարքի բազմամյա հետազոտությունները, որոնք արտացոլում են խնդրո առարկայի մասին գոյություն ունեցող տարբեր տեսակետները: Մի կողմից դրանք այն տեսություններն են, որոնք հիմնվում են դիսպոզիցիոնիզմի վրա՝ անձին (ոչ թե իրադրությանը) վերագրելով վարքային կարծրատիպերի ընտրության համար պատասխանատվություն: Վարքի կանխատեսման ժամանակ մանրամասնորեն ուսումնասիրվում էին անձնատիպաբանական առանձնահատկությունները (Չ. Ֆրոյդ, Ա. Ադլեր, Է. Ֆրոմմ, Կ. Դոնի, Գ. Սալլիվան, Դ. Բուլբի, Ա. Մալոու, Պ. Ռոբլոկ, Կ. Լեոնգարո, Ա. Է. Լիչկո, Ա. Սմիչեկ, Վ. Ա. Բեխտերև, Պ. Բ. Գանուշկին), իսկ մյուս կողմից՝ դրանք այն տեսություններն են, որոնք ապացուցում են իրադրային գործոնների էական դերը վարքային ռեակցիաների ընտրության մեջ, հատկապես ֆրոստրացիայի իրադրությունում (Գ. Դարլի, Կ. Բաթսոն): Արտաքին գործոնների դերի գերապատվության ճանաչումը վարքային առանձնահատկությունների ձևավորման վրա կոչվում է *իրադրայնություն (սիտուացիոնիզմ)*: Քանի որ դեֆինիտ վարքը հնարավոր չէ բացատրել միայն հոգեբանական գործոնների վերլուծության հիման վրա՝ որևէ հոգեբանական հատկանիշի, կոնֆլիկտի կամ «բարդության» (Շուլեսլեր, Կրեսսի 1950), կամ միայն որպես ստեղծված հանգամանքների հետևանք, ներկայումս հոգեբանների և սոցիոլոգների մեծամասնությունը արդյունավետ են համարում սոցիալ-անձնային մոտեցումը: Այն հիմնված է լրացուցիչ սկզբունքի օգտագործման հիման վրա՝ որպես իրադրային (սիտուատիվ) և անձնային (տրանսսիտուատիվ) գործոնների փոխգործունեության վրա, որոնք միավորում են դեֆինիտ վարքի կենսաբանական, հոգեբանական և սոցիոլոգիական պատճառները: Ի դեպ չեղվող վարքը դետերմինացնում են անձնային գործոնները, իսկ *իրադրայինները (սիտուատիվները, միջավայրի պայմանների ազդեցությունը)* խաղում են մոդուլատորի դեր՝ որոշելով անհատական առանձնահատկությունների դրսևորման տարբերակները:

Հետազոտության մեջ ընդգրկվել են Վանաձորի, Ստեփանավանի և Սպիտակի 14-17 տարեկան 160 անչափահասներ, որոնք կազմեցին 2 խումբ և հետագայում դրանք տարբերակվել են խումբ 1՝ «նորմա» և խումբ 2՝ «ռիսկի»: «Նորմա» խումբը կազմել են միևնույն տարիքի 80 (35 տղա և 45 աղջիկ) նորմատիվ վարքով անչափահասներ Վանաձորի թիվ 1; 6; 11; դպրոցներից: Նրանց վարքի նորմատիվությունը որոշվում էր «ռիսկի» խումբ միկրոսոցիումի համեմատությամբ, քանի որ երբեմն դեֆինիտներ են համարում նաև նրանց, ովքեր երբեմն ցուցադրում են ագրեսիվություն կամ «մեկ անգամ և պատահաբար» իրենց դրսևորել են աշակերտին անվայել ձևով: «Ախենբախի հարցարանի» դեֆինիտ վարքի ախտանիշներից նրանք հավաքեցին

նվազագույն միավորներ, սակայն նրանց մոտ դրսևորվում էին հուզական անբարենաչողության, դպրոցական ղեգադապտացիայի ախտանիշներ:

Պայմանականորեն առանձնացնել ենք հետազոտության չորս փուլեր.

1. Փաստաթղթերի վերլուծության մեթոդ և նախնական ֆատորոշիչ հարցազրույց (ուղղորդված զրույց անչափահասի հետ): Այն հանդես էր գալիս որպես հատուկ մեթոդական ընթացակարգ, որը նախորդում է հոգեախտորոշիչ մեթոդիկաների իրագործման: Փաստաթղթերի վերլուծության մեթոդը և անչափահասի հետ նախնական զրույցը թույլ էր տալիս ստանալ մի շարք տվյալներ նրա կյանքի պայմանների կամ նրա մերձավոր շրջապատի, սոցիալական էկոլոգիայի մասին, նաև ժողովրդագրական տվյալներ: Անչափահասների փաստաթղթերի վերլուծության և նրանց հետ նախնական հարցազրույցի ընթացքում ստացված տվյալներին համապատասխան կառուցվել էին «որակական փոփոխականներ», որոնք դիտարկվում են որպես անչափահասի զարգացման արտաքին պայմանների գործոններ:

2. K-SADS կիսակառուցակարգված (կիսաստանդարտացված) ֆատորոշիչ հարցազրույց: K-SADS- կիսակառուցակարգված հարցարանը, որը կառուցված է դպրոցական տարիքի (6-18 տարեկան) երեխաների մոտ հուզական խանգարումների և շիզոֆրենիայի բացահայտման համար: Անց է կացվում երեխայի հետ հարցազրույցի ձևով, անհրաժեշտության դեպքում լրացվում է նրա համար պատասխանատու մեծահասակների հարցումներով: K-SADS մեթոդիկան բացահայտում է անչափահասների մոտ հոգեկան խախտումների դրվագները և ախտանիշները: Սխտանիշերի բացահայտման համար առաջադրված չափորոշիչները (դրանք փոփոխականներ են, որոնք ներկայացված են 21 սանդղակում և 5 լրացուցիչ սանդղակներում) հենվում են բոլոր աղբյուրներից ստացված ինֆորմացիայի օգտագործման վրա: K-SADS հարցազրույցի օգնությամբ ֆատորոշվող ցուցանիշները կարող են ավելի սերտ կապված լինել հոգեբանական անբարենաչողության արտաքին կամ ներքին արտահայտված ախտանիշների հետ: «Ներքին» մենք անվանում ենք մեր արդյունքների վերլուծության ընթացակարգի համատեքստում, երբ դրանք մի կողմից դիտարկվում են որպես ներխմային փոփոխականներ, մյուս կողմից՝ որպես հոգեբանական փոփոխականներ, որոնք հակադրվում են արտաքին պայմանների գործոններին՝ որակական փոփոխականներին, որոնք հաշվի են առնվում որպես ընտանեկան և դպրոցական շրջապատի առանձնահատկություններ և վերականգնվում են հարցազրույցի ընթացքում:

3. Դեռահասների թեստավորում (Այզենկի անձնային թեստը EPI (Eysenck Personality Invektory), անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ֆատորոշման մեթոդիկա (ըստ Կ. Թոմասի), Ա. Բասի և Ա. Դարկիի ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ֆատորոշման մեթոդիկա: *Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ֆատորոշման մեթոդիկա (ըստ Կ. Թոմասի)* - նախատեսված է որոշելու մարդու վարքի մարտավարությունը տարբեր կոնֆլիկտային իրադրություններում: Առանձնացվում է կոնֆլիկտային վարքի 5 հիմնական ձևեր՝ մրցակցություն, համագործակցություն, փոխզիջում, խուսափում, հարմարում: Ա. Բասի և Ա. Դարկիի ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ֆատորոշման մեթոդիկան կիրառելու արդյունքում չափվել են ագրեսիվության ցուցանիշները և տեսակները:

4. Պ. Ֆրիկի (20 հարցեր) և Տ. Սլենբախի (112 հարցեր) հարցարանների կիրառություն: Այդ երկու հարցարաններն իրենցից ներկայացնում են ոչ այնքան վերբալ թեստեր, որքան ստանդարտ «դիտման թերթեր»: Դրանք լրացնում է կամ հոգեբանը, որը հնարավորություն ունի երկար ժամանակ հետևելու երեխային, կամ

հարցնել անծանր իրեն, կամ էլ մեծահասակներին: Սեր ուսումնասիրության ընթացքում դրանք լրացրել են երեխաների ուսուցիչները և դաստիարակները: Այդ երկու մեթոդիկաների կետերը արտացոլում են սոցիալական դեզադապտացիայի վարքային դրսևորումները, երեխայի մոտ հոգեբանական խնդիրների (Ախենբախի մեթոդիկա) և փսիխոպաթիկ առանձնահատկությունների առկայությունը (Ֆրիկի հարցարան): *Ախենբախի* մեթոդիկան իր մեջ է ընդգրկում 20 կետեր, որոնք թույլ են տալիս օգտագործել փսիխոպաթիայի ընդհանուր ցուցանիշը: Տվյալ ախտանիշը հանդես է գալիս որպես անձնային զարգացման աղավաղման ու վարքի կարգավորման հանրագումար:

Արդյունքների համեմատությունը, օգտագործված չորս հոգեբանական մեթոդիկաներին համապատասխան, կատարվում էր 160 մարդուց բաղկացած ընտրանքի համար, որտեղ հիմնական արտաքին չափորոշիչ կամ հոգեբանական ցուցանիշների վրա ազդող գործոն էր հանդիսանում «խմբային պատկանելության» գործոնը:

Տվյալների մշակման ժամանակ կիրառվել են միագործոն և բազմագործոն դիսպերսիոն վերլուծության սխեմաներ: Նրանց օգնությամբ որոշվում էին անչափահասների հոգեբանական մկարագրի փոփոխությունների արդյունքները, որոնք կապված են.

1. խմբային պատկանելության հետ;
2. «արտաքին պայմանների» փոփոխականների մակարդակների հետ;
3. հոգեախտաբանական ախտանիշների արտահայտվածության հետ:

Երրորդ դրվագում ներկայացված են հետազոտության արդյունքները: Հետազոտության արդյունքների մշակման համար մեր կողմից կիրառվել է դիսպերսիոն վերլուծությունը, որն արտասահմանյան գրականության մեջ նշվում է որպես ANOVA և թարգմանվում է որպես փոփոխականության վերլուծություն: Դիսպերսիոն վերլուծությունը դա հատկանիշի փոփոխականության վերլուծությունն է վերահսկվող փոփոխական գործոնների ազդեցության տակ: Մեթոդի հեղինակ է հանդիսանում Ռ.Ա.Ֆիշերը: Դիսպերսիոն վերլուծության խնդիրը կայանում է հատկանիշի ընդհանուր փոփոխականությունից եռատեսակ փոփոխականություն առանձնացնելու մեջ.

1. փոփոխականություն, որը պայմանավորված է ուսումնասիրվող անկախ փոփոխականներից յուրաքանչյուրի գործողությամբ;
2. փոփոխականություն, որը պայմանավորված է ուսումնասիրվող անկախ փոփոխականների փոխգործողությամբ;
3. պատահական փոփոխականություն, որը պայմանավորված է բոլոր մյուս անհայտ փոփոխականներով:

Փոփոխականությունը, որը պայմանավորված է ուսումնասիրվող փոփոխականների գործողությամբ ու նրանց փոխգործողությամբ, հարաբերակցվում է պատահական փոփոխականությանը: Այդ հարաբերակցության ցուցանիշ է հանդիսանում F-ը՝ Ֆիշերի չափանիշը:

$F_{\text{մայ A}} = A$  փոփոխականով պայմանավորված փոփոխականություն/ պատահական փոփոխականություն

$F_{\text{մայ B}} = B$  փոփոխականով պայմանավորված փոփոխականություն/ պատահական փոփոխականություն

$F_{\text{մայ A B}} = AB$  փոփոխականների փոխգործողությամբ պայմանավորված փոփոխականությունը/ պատահական փոփոխականություն

F չափանիշի հաշվարկի բանաձևի մեջ մտնում են դիսպերսիաների գնահատումները, այդ պատճառով F-ը հանդիսանում է բնութագրող մեծության չափանիշ:

Որքան հատկանիշի փոփոխականության աստիճանը պայմանավորված ուսումնասիրվող փոփոխականներով (գործոններով) կամ նրանց փոխգործողությամբ քան բարձր են F չափանիշի էմպիրիկ նշանակությունները: Դիսպերսի վերլուծության մեջ ուսումնասիրողը ելնում է այն ենթադրությունից, փոփոխականների մի մասը կարող են դիտարկվել որպես պատճառ, իսկ մյուսները հետևանքներ: Առաջին տեսակի փոփոխականները համարվում են գործոններ երկրորդ տեսակի փոփոխականները՝ արդյունավետ հատկանիշներ:

Երկգործոնային դիսպերսիոն վերլուծությունը թույլ է տալիս մեզ գնահատել միայն գործոններից յուրաքանչյուրի ազդեցությունն առանձին-առանձին, այլև նրա փոխգործողությունը: Քանի որ կարող է պատահել այնպես, որ փոփոխականներ մեկը նշանակալի ձևով ազդում է ուսումնասիրվող հատկանիշի վրա մյուս փոփոխականի փոքր (կամ մեծ) նշանակությունների դեպքում: Օրինակ՝ պատ ուժեղացումը կարող է աղջիկների մոտ նվազեցնել ազդեցիկ ռեակցիաների քանակ իսկ տղաների մոտ ընդհակառակը բարձրացնել:

Այդուհանդերձ 1-ում ներկայացված են չկապակցված ընտրանքի համար երկգործոնային դիսպերսիոն վերլուծության (MANOVA) կիրառության արդյունքները որը թույլ տվեց պարզել ժողովրդագրական փոփոխականների ազդեցությունը էֆեկտների կարևորությունը հոգեբանական ցուցանիշների վրա բոլոր երեք վերը մեթոդիկաներով: Տղաների կամ աղջիկների խմբին պատկանելությունը մեծ չափ չէր ազդում համապատասխան փոփոխականների ցուցանիշների վրա:

Աղյուսակ 1.

Գործոն	Wilks λ	F	ρ-ի նշանակալիության մակարդակը
Տարիք	0,560	2,120	0,001
Խումբ	0,174	9,722	0,001
Փոխգործողություն	0,465	2,115	0,001
Սեռ	0,527	1,511	0,064
Խումբ	0,144	11,325	0,001
Փոխգործողություն	0,342	1,256	0,131

Սեռի և տարիքի գործոնների հոգեբանական փոփոխականների վրա ազդեցությունը էֆեկտների համար դիսպերսիոն վերլուծության արդյունքները:

Wilks Lambda = երկու ընտրանքների միջև առավելագույն տարբերության կետը, ρ-ին հնարավոր սխալմունքի գործակիցը:

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից մեր հետազոտության մեջ հաստատվել փորձարկվողների տարիքի ազդեցության նշանակալիությունը հոգեբանական ցուցանիշների վրա, նաև «տարիքի» և «խմբին պատկանելության» գործոններ փոխգործողությունները:

Աղյուսակ 2-ում ներկայացված են յուրաքանչյուր տարիքի (14, 15, 16 և տարեկան) համար փսիխոպաթիայի սանդղակներով գործակիցները նշանակությունները (Ֆրիկի մեթոդիկան) և K-SADS-ի այն սանդղակներով, որոնք համար հաստատված են նշանակալի միջխմբային տարբերությունները:

Խումբ	Տարիքը				Միջինը
	14	15	16	17	
<i>Փսիխոպաթիա (ըստ Ֆրիկի)</i>					
«Նորմա» խումբ	14,85	15,34	15,71	14,43	15,08
«Ռիսկի» խումբ	16,89	17,95	18,53	18,81	18,04
<i>I-Դեպրեսիվ խամրումներ</i>					
«Նորմա» խումբ	7,88	8,12	8,05	8,21	8,06
«Ռիսկի» խումբ	8,85	9,11	9,20	9,34	9,12
<i>VI-Սոցիոֆորիա</i>					
«Նորմա» խումբ	11,95	11,88	12,44	12,53	12,20
«Ռիսկի» խումբ	11,91	11,63	10,94	11,10	11,39
<i>VII-Գերտազնապայնություն</i>					
«Նորմա» խումբ	5,44	5,31	5,73	5,64	5,53
«Ռիսկի» խումբ	4,85	5,00	5,13	4,93	4,97
<i>XIV-Ուշադրության պակասի և հիպերակտիվության ախտանիշ</i>					
«Նորմա» խումբ	5,89	5,24	5,55	5,51	5,54
«Ռիսկի» խումբ	6,54	6,69	5,62	5,63	6,12
<i>XV-Ընդդիմադիր վարք</i>					
«Նորմա» խումբ	4,23	4,15	4,95	5,00	4,58
«Ռիսկի» խումբ	5,15	4,83	4,86	4,93	4,94
<i>XVI-Վարքի խախտումներ</i>					
«Նորմա» խումբ	5,34	8,35	6,41	5,28	6,34
«Ռիսկի» խումբ	8,11	7,84	7,43	7,95	7,83
<i>XVIII-Ծխախտի օգտագործում</i>					
«Նորմա» խումբ	2,77	2,93	3,84	3,93	3,36
«Ռիսկի» խումբ	3,71	4,32	4,24	4,57	4,21
<i>XIX-Ալկոհոլի օգտագործում</i>					
«Նորմա» խումբ	1,02	1,83	2,23	2,52	1,90
«Ռիսկի» խումբ	1,77	2,44	2,83	2,96	2,50

Փսիխականների քանակական գործակիցների տարիքային դիմամիկայի փոփոխությունները K-SADS կիսակառուցակարգված հարցազրույցի և Ֆրիկի «դիտման թերթի» համաձայն:

Երկգործոնային դիսպրաքսիա վերլուծության միջոցով մենք կարողացանք ստուգել K-SADS- ի սանդղակներով քանակական գործակիցների վարիաբերության տարբերության վերաբերյալ վարկածները՝ կախված անչափահասների այս կամ այն խմբին պատկանելությունից: Ստացված տվյալները հաստատեցին այդ մեթոդիկայի սանդղակների մեծամասնության տարբերությունները:

«Չետազուտության արդյունքների հոգեբանամանկավարժական վերլուծությունը» դրվագում կատարվում են ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալների ընդհանրացումները:

1. Դեհանտ անչափահասների ցուցանիշների փոփոխություններն այնքան էլ միանշանակ չեն, դրանք իրենց հերթին կարող են դիտարկվել որպես վարքային խախտումների դետերմինանտներ:

2. Գերտազնապայնության ցուցանիշների նվազումը կապված է դեղինկվենտության գործակիցների աճի հետ:

3. Ստացված փորձարարական տվյալները օրյլ են տալիս ենթադրելու, որ երեխայի զարգացման ներքին պայմանների մեջ աղավաղումների ձևերը վերախմանստավորվում են, որոնք համազգեսում են վարքային շեղումների:

4. Ռիսկի խմբի անչափահասներն այսօր չեն առանձնանում բարձր տազնապայնությամբ, ինչը պետք է հաշվի առնել սոցիալական աշխատանքում և դաստիարակության մեթոդների ընտրության և մշակման մեջ:

5. Անչափահասի նկատմամբ բռնության կիրառման փաստը կանխորոշեց վարքային խանգարումների համապատասխան ցուցանիշների աճը երկու սանդղակներով, որոնք ախտորոշվել են զրույցի և փաստաթղթերի վերլուծության միջոցով: Սակայն զարգացման արտաքին պայմանների այլ աղավաղումները, այսինքն՝ սոցիալական և ընտանեկան անբարեհաջողության գործոնները, տարբեր կերպ էին ազդում ընդդիմադիր և դեղինկվենտ վարքի ցուցանիշների վրա: Տարբերվում էին նաև ազդեցությունների էֆեկտները ներքին պայմանների կողմից: Դա վկայում է մեր այն վարկածի հաստատման մասին, որ անչափահասների հոգեբանական առանձնահատկությունների տարբեր պատճառական կապեր կանխորոշում են վարքային շեղումների այդ երկու ձևերի զարգացումը:

Ատենախոսության երրորդ՝ Ռիսկի խմբի անչափահասների դեհանտ վարքի նախազգուշացման և հողթահարման ուղիները՝ գլխի առաջին դրվագում ներկայացվում է նորմատիվ և դեհանտ վարքի հարաբերակցությունը ռիսկի խմբի անչափահասների մոտ: Աշխատանքում դասակարգված ու համագամորեն բնութագրված են օրյեկտիվ և սուբյեկտիվ այն անբարենպաստ գործոնները, որոնք նպաստում են անչափահասների դեհանտ վարքի առաջացման և անձնային որակների անբարենպաստ փոփոխություններին: Տրվում են նորմայի և դեհանտային նկատմամբ մոտեցումները տարբեր գիտություններում և սոցիալ-հոգեբանական ու հոգեբանամանկավարժական գիտության տարբեր ուղղություններում: Այսպիսով՝ հոգեբանության մեջ նորման կարելի է դիտել որպես վարքի տալում, անհատի կողմից տվյալ հասարակության մեջ տվյալ ժամանակաշրջանում ընդունված բարոյական պահանջներին հետևելը: Վերլուծելով «դեհանտ» և «նորմա» վարք հասկացությունները, դիտարկելով նրանց տիպերը և ձևերը՝ մենք եկանք այն եզրակացության, որ տվյալ երևույթը համոզիսանում է հարաբերական, յուրաքանչյուր երկրում դեհանտ երևույթներն ունեն կոնկրետ տեսք՝ կախված պատմամշակութային ավանդույթներից, տնտեսական-քաղաքական հարաբերություններից և մի շարք այլ գործոններից:

Երկրորդ դրվագում տրվում է ռիսկի խմբի անչափահասների դեհանտ վարքի պատճառականությունը: Պատճառականության տակ հասկացվում է գործոնների հանրագումար, որոնք առաջացնում, դրդում կամ ուժեղացնում են շեղվող վարքը: Դետերմինավորող գործոնները ազդում են սոցիալական կազմակերպության տարբեր մակարդակներում, որի մեջ անձը հանդիսանում է ենթահամակարգերից մեկը: «Հասարակություն-անձ» համակարգը միաժամանակ գործում է մի քանի մակարդակներում՝ գեոֆիզիկական, մակրոհասարակական, սոցիալ-խմբային, միկրոսոցիալական, անհատական-անձնային, հոգեֆիզիոլոգիական: Առանձնացված մակարդակներից համապատասխան ե.Վ.Ձմանովսկայան սահմանել է գործոնների հետևյալ խմբերը, որոնք դետերմինավորում են անձի շեղվող վարքը.

1. ֆիզիկական միջավայրի արտաքին պայմանները,
2. արտաքին սոցիալական պայմանները,
3. ներքին ժառանգական-կենսաբանական և կոնստիտուցիոնալ նախադրյալները,
4. շեղվող վարքի ներանձնային պատճառները և մեխանիզմները:

Անձի վարքի վրա գործող առավել կարևորագույն գործոն անհրաժեշտ է համարել արտաքին սոցիալական պայմանները: Դրանք են վերաբերվում.

1. հասարակական գործընթացները (սոցիալ- տնտեսական իրադրությունը, պետական քաղաքականությունը, ավանդույթները, նորածնությունը, զանգվածային լրատվության միջոցները և այլն),
2. սոցիալական խմբերի բնութագրումները, որոնց մեջ ներգրավված է անձը (ոսասյակական և դասակարգային պատկանելությունը, էթնիկական դիրքորոշումները, ենթամշակույթը, սոցիալական կարգավիճակը, պատկանելությունը ուսումնամասնագիտական խմբին, ռեֆերենտային խումբը),
3. միկրոսոցիալական միջավայրը (ընտանիքի կենսաունձը և կենսամակարդակը, հոգեբանական մթնոլորտն ընտանիքում, ընտանեկան դաստիարակության ոճը, ընկերները, այլ նշանակալից մարդիկ):

Ռիսկի խմբի անչափահասների դեհանտ վարքի պատճառականության բացահայտման համար, մեր ուսումնասիրության ընթացքում, մենք կիրառել ենք որոշակի ընտրանքների բավականին լայն հետազոտություն: Մենք կարողացանք բավականին ներկայացուցչական ընտրանքի վրա համեմատել շեղվող վարքի ավստորոշման արդյունքները երկու սկզբունքորեն տարբեր ձևով կողմնորոշված մեթոդիկաներով:

Չետաքցրական է մեր կողմից ստացված հետևյալ փաստը՝ ներքին պայմանների փոփոխականները նշանակալիորեն ազդում էին Ախենբախի մեթոդիկայի 3 ցուցանիշների՝ սոցիալականացման, մտածողության և դեմոնիկվետ վարքի խնդիրների վրա: Դա թույլ է տալիս հոգեբանական անբարեհաջողության նշված փոփոխությունները դիտարկել որպես անչափահասների հոգեախտաբանորեն պայմանավորված զարգացման դեհանտների վրա հնարավոր ազդեցությունների առավել ակնհայտ ուղղություն:

Այսպիսով, բացի ագրեսիայի մեխանիզմներին նպաստման, փոփոխականները, որոնք կապված են սոցիալականացման խախտման հետ, կապված են նաև իմացական ուղրտի առանձնահատկությունների՝ անչափահասների կողմից իրենց շրջապատող իրողությունների հասկացման հետ, ինչն օրինաչափորեն շեղվող վարքին ուղեկցող հատկանիշների շարքում առանձնացնում է մտածողության խնդիրներ: Ցածր ինտելեկտը դիտարկվում է որպես դիսպոզիոն գործոն և արտասահմանյան, և հայրենական գրականության մեջ, որը կապվում է սուբյեկտի հակասոցիալական վարքի հետ: Սակայն էմպիրիկ ուսումնասիրություններում դա հաստատվում է միայն որոշ ռիսկի խմբերի համար: Այսպես, դեռահասական վարքային խախտումների դեպքում ինտելեկտն ավելի բարձր է, քան մանկական և խախտումները ձեռք են բերում ընդդիմադիր վարքի ձևեր:

Այս ենթազխում անչափահասների հետազոտության մեր արդյունքները ներկայացվում են անկայունության պայմաններում սոցիալական գործոնների ազդեցության էֆեկտների բացահայտման տեսանկյունից, որոնք բնութագրում են հայ անչափահասների շարժումը դեպի «ռիսկի գոտին»:

Օգտագործված հոգեբանական մեթոդիկաների ցուցանիշների համեմատության արդյունքների համար հիմնական արտաքին չափանիշ է հանդես եկել խմբային պատկանելությունը: Բացի այդ, դիտարկելով նշված գործոնը որպես կոմպոսիտալ՝ մենք որպես հոգեբանական ցուցանիշների վրա ներգործող արտաքին գործոններ դիտարկել ենք որակական փոփոխականների ազդեցությունները, որոնք կառուցված են նախնական հարցազրույցի արդյունքներով:

1. անչափահասի վերաբերմունքը ուսման և դպրոցի նկատմամբ;
2. հարաբերությունները հասակակիցների հետ;
3. հարաբերություններն ընտանիքում;
4. անչափահասների կողմից իրավախախտումների կատարման գործոնները;
5. ակտիվիզացիան ընտանիքում;
6. երեխաների քանակն ընտանիքում;
7. ծնողների կրթությունը և աշխատանքը:

Գործոն	Wilks λ	F	p-ի նշանակալիության մակարդակը	
1. Դպրոց	0,148	1,584	0,0001	Նշանակալի է
2. Խումբ	0,415	9,144	0,0001	Նշանակալի է
3. Փոխգործողություն	0,542	5,645	0,0001	Նշանակալի է
1. Հասակակիցներ	0,658	3,183	0,0001	Նշանակալի է
2. Խումբ	0,158	10,895	0,0001	Նշանակալի է
3. Փոխգործողություն	0,784	2,164	0,0001	Նշանակալի է
1. Ընտանիքում երեխաների քանակը	0,793	1,820	0,007	Նշանակալի է
2. Խումբ	0,145	11,502	0,0001	Նշանակալի է
3. Փոխգործողություն	0,822	1,521	0,045	Նշանակալի է
1. Սոր կրթությունը	0,819	1,630	0,025	Նշանակալի է
2. Խումբը	0,169	9,960	0,0001	Նշանակալի է
1. Սոր աշխատանքը	0,874	1,002	0,470	Նշանակալի չէ
2. Խումբը	0,155	10,734	0,0001	Նշանակալի է
1. Հոր կրթությունը	0,831	1,418	0,077	Նշանակալի չէ
2. Խումբը	0,143	11,108	0,0001	Նշանակալի է
1. Հոր աշխատանքը	0,809	1,648	0,020	Նշանակալի է
2. Խումբը	0,147	11,188	0,0001	Նշանակալի է

Արտաքին պայմանների փոփոխականների էֆեկտների բացահայտման և խմբային պատկանելության արդյունքները:

Փոխգործողության էֆեկտներից նշված են միայն նշանակալիները:

Այսպիսով, ուսումնասիրության խնդիրը հանդիսացավ անչափահասի սոցիալական շրջապատի այն փոփոխականների հայտնաբերումը, որոնք նշանակալիորեն ազդում են «նորմա» և «ռիսկի» խմբի անչափահասների վարքային խախտումների հոգեբանական առանձնահատկությունների և արտահայտվածության վրա:

Ամփոփելով ռիսկի խմբի անչափահասների դեհանտ վարքի պատճառականությունը՝ կարելի է հատկանշել հետևյալ առանձնահատկությունները:

1. Դեհանտ վարքի պատճառականության շղթայում կարևոր տեղ են գրավում արտաքին կամ օբյեկտիվ անբարենպաստ պատճառներն ու պայմանները: Դրանք կազմում են անձի սոցիալականացման, կրթության և դաստիարակության բերությունները և բացթողումները: Հատկապես վարքի շեղման ակնհայտ պատճառները սոցիալական են. անբարեկեցիկ կյանքը, սոցիալական անարդարությունը, պետական հովանավորության պակասը, հանցավորությունը, մարմնավաճառությունը և ընդհանրապես նեգատիվի և կրիմինալի տարաբնույթ դրսևորումները:

2. Օբյեկտիվ անբարենպաստ գործոնների ազդեցության տակ անչափահասը հետզհետե սոցիալապես փտափարվում է և դառնում ընկալունակ կրիմինալի նկատմամբ: Այդ գործընթացում անձը ձեռք է բերում մի շարք անբարենպաստ անձնային որակներ և հատկանիշներ (ագրեսիվություն, նեգատիվ դիրքորոշում շրջապատի նկատմամբ, քրեածին վարքի միտումներ և դրդապատճառներ, դաժանություն, կոպտություն, հուզական անտարբերություն և այլն): Այդպիսի գործոնների ամբողջությունը դեհանտ վարքի պատճառականության շղթայում ներկայանում է որպես սուբյեկտիվ գործոն:

3. Անչափահասի դեհանտ վարքի կազմավորմանը հատկապես նպաստում է ծնողների և մանկավարժների վերաբերմունքն աճող մարդու նկատմամբ. անհրաժեշտ հոգածությունը, սերն ու փաղաքշանքը, ուշադրությունը, երեխայի ընկալումը որպես անձնավորություն, նրա կարծիքի և ցանկությունների հետ հաշվի նստելը, նրա իրավունքներն ու ազատությունները հարգելը և այլն: Դրանց բացակայությունը հատկապես նպաստում է անչափահասի կողմից վատ սովորությունների ձեռք բերմանը (թափառաշրջիկությունը, ծխելը, ալկոհոլ և քմրանյութ օգտագործելը և այլն):


Երրորդ դրվագում ներկայացվում են ռիսկի խմբի անչափահասների դեհանտ վարքի կանխարգելման և հոգեշտկման հոգեբանական ուղիները: Ենթադրվում է, որ շեղվող վարքի կանխարգելումը ենթադրում է ընդհանուր և հատուկ միջոցառումների համակարգ սոցիալական կազմակերպության տարբեր մակարդակներում: Գոյություն ունեն հոգեբանական կանխարգելիչ աշխատանքի տարբեր ձևեր՝ սոցիալական միջավայրի կազմակերպումը, իրազեկումը, սոցիալապես նշանակալի հմտություններին ակտիվ սոցիալական ուսուցումը, շեղվող վարքին այլընտրանքային գործունեության կազմակերպումը, առողջ ապրելակերպի կազմակերպումը, շեղվող վարքի նեգատիվ հետևանքների նվազեցումը: Դեհանտ վարքի առանձնահատկությանը համապատասխան կարելի է առանձնացնել հոգեբանական կանխարգելման հետևյալ սկզբունքները.

1. համալիրությունը. սոցիալական տարածության տարբեր մակարդակներում ներգործության կազմակերպումը,
2. հասցեագրվածությունը. տարիքային, սեռային և սոցիալական բնութագրումների հաշվի առնելը,
3. մասսայականությունը. աշխատանքի խմբային ձևերի գերակայությունը,
4. ինֆորմացիայի պոզիտիվությունը,
5. նեգատիվ հետևանքների նվազեցումը,
6. մասնակիցների անձնական շահագրգռվածությունը և պատասխանատվությունը,
7. անհատի առավելագույն ակտիվությունը,
8. վարքի հետևանքների գնահատումը, պոզիտիվ նպատակների ու արժեքների ակտուալիզացումը և ապագայի այանավորումն առանց դեհանտ վարքի:

Մշակված մեթոդական հանձնարարականներն ուղղված են ծնողներին, մանկավարժներին ռիսկի խմբի անչափահասների շեղվող վարքի դրսևորումները նախազգուշացնելու և հաղթահարելու համար: Ատենախոսության տվյալ բաժնում հանգամանորեն ներկայացված են հոգեշտկողական աշխատանքների կազմակերպումն ու մեթոդիկան:

Անչափահասը, հայտնվելով իր համար բարդ խնդրի առջև կամ իրադրության մեջ, պետք է կատարի ընտրություն: Այդպիսի իրադրությունները սուբյեկտիվորեն նշանակալի և վախեցնող են ու շատ են ցանկացած անչափահասի կյանքում: Անչափահասն ունի վարքի երկու տարբերակ. կարող է ընդունել մարտահրավերը և ռիսկի դիմել կամ խուսափել դժվարություններից և քաշվել մի կողմ: Վարքի այդ ռազմավարությունները կարելի է համապատասխանաբար անվանել հաղթահարում ու խուսափում, և անչափահասը գիտակցորեն կամ անգիտակցորեն ընտրում է նրանցից մեկը:

Նշված ռազմավարությունները գրաֆիկորեն պատկերված են ներքևում բերված սխեմայում:



Վարքի ռազմավարության ընտրություն

Պատկերացնենք, որ մեր անչափահասները նորից մոտենում են ընտրության կետին, միայն նրանցից մեկի մոտ վատահույսություն է, իսկ մյուսի մոտ վախ է. «Եթե ընդունեմ մարտահրավերը, կարող եմ պարտվել, այն ժամանակ ստիպված կլինեմ ծանաչել, որ ես այդքան էլ նշանակալի չեմ, ինչպես ինքս ինձ համոզում էի, իսկ ավելի վատ, դրա մասին կիմանան շրջապատողները: Եվ արդեն ինքնաբերաբար առաջ է գալիս նոր արդարացում, և սխեմայում պատկերված ներքևի ուղին դառնում է կամքը թուլացնող շրջան:

Մենք վերադառնում ենք «կամքի ուժ» հասկացությանը, և արդեն հասկանալի է, թե ինչն է ընկած սեփական անձի վրա ջանք գործադրելու անկարողության հիմքում: Կամքի թուլության հիմքում ընկած է խուսափման վարքային ռազմավարությունը: Ինչպես տեսնում ենք աղյուսակ 8-ից՝ Թոմասի անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ախտորոշման մեթոդիկայի օգնությամբ կատարված ուսումնասիրության արդյունքում ռիսկի խմբի անչափահասների մոտ գերակշռող վարքի ոճը խուսափումն է: Այն կարող է դրսևորվել միայն անչափահասի կյանքի որոշ ոլորտներում: Օրինակ, միայն ուսման կամ հակառակ սեռի հետ հաղորդակցման մեջ: Կարող է դրսևորվել որոշակի միջավայրում, կարող է նաև ընդգրկել կյանքի բոլոր ոլորտները, և դա պետք է առաջացնի հատուկ տագնապ մասնագետների մոտ:

Բերված սխեմայում վարքի երկու ռազմավարությունների ընտրության դեպքում էլ, ձևավորվում է դիրքորոշումը: Այսինքն՝ ձևավորված դիրքորոշման գործուն մակարդակ, երբ նախորդ մակարդակների հիման վրա սկսվում է սոցիալական վարքի դիրքորոշումը, և անձը դա ակնառու կերպով արտահայտում է վարքագծում:

Բացի կառուցողական փոխգործողության հմտությունների անբավարար մակարդակի առկայությունից, հաղորդակցման ոլորտում կարող է խնդիր հանդիսանալ անչափահասի խմբում գրաված դիրքը: Մեր խնդիրն է օգնել նրան գիտակցելու սեփական դերը խմբում և փորձել այլ դերերում, կատարելագործել սովորական դերը: Նրան անհրաժեշտ է օգնել կատարելագործվել որպես լիդեր, ձեռք բերել նոր ընկերներ և կառուցել այդ ընկերությունը հաղորդակցման ավելի հասուն նորմերի հիմքերի վրա: Շեղվող վարքով ռիսկի խմբի անչափահասների հետ թրենինգի հիմնական նպատակներն են.

1. ներգործել ինքնազնահատականի վրա, այն դարձնել ավելի իրատեսական,
2. ամրապնդել վստահությունը սեփական ուժերի նկատմամբ,
3. զարգացնել կամքի ուժը,
4. զարգացնել ինքնավերահսկողության կարողությունը,
5. զարգացնել կառուցողական փոխգործողության հմտությունները,
6. ուսումնասիրել, փոխել և կատարելագործել խմբային դերերը:

Մեր կարծիքով, եթե այն ամենն, ինչին մենք կողմնորոշվում ենք մեր ներկայացված աշխատանքում, ձևավորվի անչափահասի մոտ, ապա նա կկարողանա հաղթահարել իր դժվարությունները: Վերականգնողական աշխատանքի արդյունավետությունը անչափահասների հետ կլինի բարձր, եթե այն ամրապնդված լինի սոցիալ-մանկավարժական միջոցառումների համախմբով՝ նրա կենսագործունեության բնական միջավայրում, ընտանիքի և ուսումնական հաստատության հետ աշխատանքով:

Բննարկելով ռիսկի խմբի անչափահասների դեմոստրացիայի նախազգուշացման և հաղթահարման ուղիները կարելի է անել հետևյալ ընդհանրացումները.

1. Հոգեբանական բարձր հարաբերակցության մեջ են նորմատիվ վարքն ու շեղումները ռիսկի խմբի անչափահասների մոտ: Վերջիններս հավասարապես տիրապետում են իրավական և սոցիալական համակեցության նորմերին և անհրաժեշտության դեպքում կարող են դրսևորել նորմատիվ վարք: Սակայն անձնային, հատկապես հուզականային ոլորտի ձեռք բերովի թերությունները նրանց ընկալունակ են դարձնում արտաքին անբարենպաստ ներգործությունների նկատմամբ և դրդում նրանց անօրինական արարքի, այդ պատճառով էլ նրանք հայտնվում են ռիսկի խմբում:

2. Դեմոստրացիայի առաջացման գործում հավասարապես ազդեցություն են ունենում արտաքին և ներքին (անձնային) անբարենպաստ գործոնները, դրանց միջև ստեղծվում են փոխադարձ կապ և փոխայնամակարդակություն: Հետևաբար, թե վարքի մոտիվացիայի հասկացման և թե կանխարգելիչ գործունեություն ծավալելու համար օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները պետք է դիտարկել մի համատեքստում:

3. Ռիսկի խմբի անչափահասների դեմոստրացիայի կանխարգելումն ու հաղթահարումը բարձր գործընթաց է և պահանջում է երկարատև նպատակաուղղված աշխատանք: Բարդությունը հիմնականում կայանում է նրանում, որ շեղվում է կոնկրետ անձի վարքը կոնկրետ պայմաններում, բայց ինչ-որ կոնկրետ մեթոդի օգնությամբ դժվար է կասեցնել սխալ վարքը, ուղղել սխալ անձնային որակը կամ վարքի այս կամ այն կողմին: Կանխարգելիչ և ուղղիչ գործունեությանը պետք է նախորդի վարքի շեղման գեներացիայի մանրամասների բացահայտումը, որպեսզի պարզ դառնա, թե ինչպե՞ս, ի՞նչ ներգործությունների տակ է այն տեղի ունեցել, որպեսզի

ընդգրկվեն համարժեք մեթոդներ և մոտեցումներ հոգեբանական վերականգնողական աշխատանքներ իրականացնելիս:

Հետազոտության արդյունքների հոգեբանական վերլուծության արդյունքում հաստատվեց առաջադրված գիտական վարկածը, ըստ որի ռիսկի խմբի անչափահասների դեմոստրացիայի վրա առաջին հերթին մեծ ազդեցություն ունեն այն օբյեկտիվ հոգեբանամանկավարժական գործոնները, որոնք պայմանավորվում են միկրոմիջավայրի ընտանիքի, հասակակիցների, դպրոցի անբարենպաստ ներգործությամբ: Ռիսկի խմբի անչափահասների դեմոստրացիայի վարքի ախտորոշումը և հոգեշտկումը փոխկապակցված գործընթաց է, որտեղ կարևորվում են հարաբերությունները ծնողների, ուսուցիչների և հասակակիցների հետ:

Հետազոտության արդյունքները և դրանց հոգեբանամանկավարժական վերլուծությունը թույլ են տալիս անելու հետևյալ եզրակացությունները.

1. Խնդիր առարկայի շուրջ կատարած պատմական ակնարկը հավաստում է, որ շեղվող կամ դեմոստրացիայի վարքը, դրա առաջացման պատճառակառուցությունը և նախազգուշացումը դեռևս հիմնականներից հետաքրքրել և մտահոգել է մարդկությանը: Դարերի, կյանքի պայմանների և հասարակական հարաբերությունների էվոլյուցիայի, փոփոխման հետ մեկտեղ փոխվել են և դեմոստրացիայի պատճառները, ստացել նոր բովանդակություն և դրսևորումներ, որոնք այսօր նորովի պետք է իմաստավորվեն դրա կանխարգելումը արդյունավետ կազմակերպելու համար: Հետևաբար, անչափահասների դեմոստրացիայի վարքը, առանձնապես ռիսկի խմբերում սոցիալ-հոգեբանական և հոգեբանամանկավարժական հիմնարար հետազոտության հիմնախնդիր է:

2. Ռիսկի խմբի անչափահասների շեղվող կամ դեմոստրացիայի վարքը երկակի դետերմինացիա ունի: Այդպիսի վարքի պատճառակառուցության շրջանում հոգեբանական բարձր հարաբերակցության մեջ են օբյեկտիվ պատճառներն ու պայմանները (մանկավարժական և սոցիալական բարձրությունը, անբարենպաստ միջավայրը իր տարաբնույթ ներգործություններով, ծնողական խնամքից զրկվածությունը և մուրացկանությունը, հասարակության մեջ տեղ գտած նեգատիվ երևույթները և այլն) և սուբյեկտիվ (անձնային) գործոնները (բջջապես դիրքորոշումը ուսման, ծնողի՝ մանկավարժի նկատմամբ, թուլակամությունը, անազնվությունը, եսասիրությունը, ցինիզմը և այլն): «Ռիսկի» և «նորմա» խմբերում դեմոստրացիայի վարքի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դեմոստրացիայի գործուն սուբյեկտիվ գործոնները գերակայում են օբյեկտիվ գործոնների վրա, բայց դեմոստրացիայի ուղղվելու պոտենցիալ հնարավորություն ունեն:

3. Ռիսկի խմբի դեմոստրացիայի վարքի տեղ անչափահասների ընդհանուր սոցիալ-հոգեբանական և հոգեբանամանկավարժական բնութագրումն առնձնացվում են ցուցանիշներ, որոնցով առաջին հերթին պայմանավորվում են նրանց վարքագծային շեղումները: Դրանք կազմում են անչափահասի սոցիալական ցածր կարգավիճակը (ստատուսը) ընտանիքում և հասակակիցների խմբում, ծնողների և մանկավարժների կողմից ուշադրության և հոգածության պակասը, ինքնաիրականացման հնարավորության սահմանափակվածությունը, ներքին տագնապայնությունը և անվստահությունը սեփական ուժերի նկատմամբ և այլն: Վերլուծելով դեմոստրացիայի վարքի դրսևորումները, տիպերը և ձևերը՝ հանգել ենք այն եզրակացության. որ դեմոստրացիայի վարքը յուրաքանչյուր յուրաքանչյուր հասարակության համար և կախված են պատմամշակութային ավանդույթներից, տնտեսական-քաղաքական հարաբերություններից և մի շարք հոգեբանական և այլ գործոններից:

4. Տագնապայնության մի շարք գործակիցներ նվազում են: Ուսումնասիրությունից հետևում է, երբ անչափահասները անցնում են «ռիսկի» խումբ

տազնապայմանության ցուցանիշների փոփոխությունները միանշանակ չեն, և իրենց հերթին կարող են դիտարկվել որպես վարքային խախտումների դետերմինանտներ: Գերտազնապայմանության ցուցանիշների նվազումը կապված է դելինկվենտության գործակիցների աճի հետ: «Ռիսկի» խմբի անչափահասները այսօր չեն բնութագրվում բարձր տազնապայմանությամբ, ինչը պետք է հաշվի առնել սոցիալական աշխատանքները կազմակերպելիս և դաստիարակության մեթոդներն ընտրելիս ու նշակելիս:

5. Շեղվող վարքով ռիսկի խմբի անչափահասների մոտ ընտանեկան անբարեհաջողության գործոնները և ընտանեկան էկոլոգիայի խախտումները նշանակալիորեն կանխորոշում են վարքային խախտումների կամ դելինկվենտ վարքի զարգացումը: Ի դեպ՝ անչափահասի մոտ վարքային խնդիրների ցուցանիշները նշանակալիորեն աճում էին համապատասխան սանդղակներով՝ անկախ նրանից, թե դրանք չափված են կիսատանդարտացված հարցազրույցի (K-SADS), թե Ախենբախի հարցարանի օգնությամբ, իսկ «նորմա» խմբում աճում էր գերտազնապայմանության և սոցիոֆոբիայի ցուցանիշը ընդդիմադիր վարքի ցուցանիշների նվազման հետ մեկտեղ: «Ռիսկի» խմբում ընդդիմադիր վարքի բարձր մակարդակը կապվում է գործողությունների պասիվ ազդեսիվ ուղղվածության հետ, ուղեկցվում էր ցածր տազնապայմանության և սոցիոֆոբիայի ցածր ցուցանիշներով:

6. Դետազոտության արդյունքները թույլ են տալիս հավաստելու, որ շեղվող վարքի կանխարգելումը ենթադրում է ընդհանուր և հատուկ միջոցառումների համակարգ սոցիալական կազմակերպության տարբեր մակարդակներում: Գոյություն ունեն հոգեբանական կանխարգելիչ աշխատանքի տարբեր ձևեր՝ սոցիալական միջավայրի կազմակերպում, իրազեկում, սոցիալապես նշանակալի հմտություններին ակտիվ սոցիալական ուսուցում, շեղվող վարքին այլընտրանքային գործունեության կազմակերպում, առողջ ապրելակերպի կազմակերպում, շեղվող վարքի նեգատիվ հետևանքների նվազեցում:

7. Հոգեշտկողական և դաստիարակչական ծրագրերը չեն կարող հաշվի չառնել այն, թե որքան բարձր է արտահայտված անչափահասների հոգեբանական անբարեհաջողությունը ռիսկի խմբում: Ուսումնասիրության տվյալները կարող են դիտարկվել նաև «դժվար» դեռահասների վրա հոգեշտկողական և սոցիալական ներգործությունների տեսանկյունից: Սակայն անպայման անհրաժեշտ է հաշվի առնել հոգեախտաբանական գործոնների ազդեցության հնարավորությունը դելինկվենտ վարքի զարգացման մեջ: Վերջինս ենթադրում է համալիր փորձագիտություն յուրաքանչյուր առանձին դեպքի համար:

8. Շեղվող վարքով անչափահասների հետ հոգեշտկողական աշխատանքում կարելի է առաջնորդվել նրանց մոտ որոշակի դիրքորոշման ձևավորման վրա, որին կարելի է հասնել կամային որակների զարգացման միջոցով:

9. Կախված վարքում ռիսկիների արտահայտվածության աստիճանից և սոցիալական ենթատեքստի առանձնահատկություններից հոգեբանամանկավարժական ներգործության օպտիմալ ռազմավարություն է հանդիսանում անչափահասի անհատական զարգացման օպտիմալ հետազոտող, որը ենթադրում է ռազմավարությունների համակցություն: Ռազմավարություններն ուղղված են անցյալում կատարված սխալների և դրանց վարքային հետևանքների շտկմանը, և ռազմավարություններ, որոնք կողմնորոշված են օգնելու անչափահասին անձնային առանձնահատկությունների ձևավորմանը, համարժեք ապագայի կառուցմանը, նրանց ինքնադրսևորմանը և ինքնաիրականացմանը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հրատարակված հետևյալ աշխատանքներում՝

1. Զ.Ռ.Ավագիմյան, Ռ.Ա.Ավագիմյան, Դևիանտ և նորմալ վարքի համեմատա վերլուծությունը, ՎՊՄԻ-ի գիտական նյութերի ժողովածու, Վանաձոր, 2005, 417-422:
2. Զ.Ռ.Ավագիմյան, «Ռիսկի» խմբի դեռահասների դևիանտ վարքի նկատման գիտական մոտեցումները տարբեր ժամանակաշրջաններում, ՎՊՄԻ-ի գիտա նյութերի ժողովածու, Վանաձոր, 2005, էջ 441-448:
3. Զ.Ռ.Ավագիմյան, Սոցիալ-հոգեբանական միջավայրի ազդեցությո դեռահասների դևիանտ վարքի վարքի առաջացման վրա, Հոգեբանություն կյանքը, 2007, №1-2, էջ 113-120:
4. Զ.Ռ.Ավագիմյան, Դեռահասության տարիքի ռիսկի գործոնները, «Բանը գիտական աշխատություններ N2, Վանաձոր, 2007, էջ 301-306:
5. Զ.Ռ.Ավագիմյան, «Ռիսկի» խմբի դեռահասների դևիանտ վա պատճառակառությունը, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես 41 Վանաձոր, 2008, էջ 48-52:

**ПСИХОЛОГО-ПЕДАГОГИЧЕСКИЕ ФАКТОРЫ ДИАГНОСТИКИ И  
КОРРЕКЦИИ ДЕВИАНТНОГО ПОВЕДЕНИЯ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ  
ГРУППЫ "РИСКА"**

**Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.05 "Возрастная и педагогическая психология".**

Защита диссертации состоится 27 января 2009г., в 14.00 на заседании специализированного Совета 060 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете имени Х.Абовяна по адресу: 375010 г.Ереван, ул. Тигран Меци, 17.

**РЕЗЮМЕ**

**Актуальность исследования** заключается в том, что психолого-педагогические условия психодиагностики и психокоррекции девиантного поведения несовершеннолетних группы "риска" исследовались в контексте различных негативных и позитивных влияний, имеющих в обществе и влияющих на отклонения в поведении ( в цепочке семья – девиантный подросток, учитель – девиантный подросток, группа "риска" – девиантный подросток). На необходимом уровне не выявлялись те основные психологические препятствия и трудности, которые могли быть связаны с проблемами, существующими в данном регионе (землетрясение, преодоление последствий землетрясения и др.). Предпринятое нами монографическое исследование данной проблемы позволяет выявить и предотвратить формирование девиантного поведения у несовершеннолетних в конкретном регионе, а при необходимости организовать соответствующую психокоррекционную работу.

**Основная цель исследования** – выявить психолого-педагогические причины и особенности проявления девиантного поведения несовершеннолетних группы "риска", а также представить психолого-педагогические условия психодиагностики и психокоррекции девиантного поведения несовершеннолетних.

**Научная новизна исследования** заключается в следующем. В нашей республике правонарушения и преступления подростков и юношей, порождающие их причины и благоприятствующие им условия до сих пор не подвергались психолого-педагогическому анализу. В частности, новизной является то, что предметом исследования стало выявление особенностей связи между социальными, психологическими и педагогическими последствиями Лорийского марза и отклонениями в поведении у 14-17-летних несовершеннолетних. В исследовании впервые экспериментальным путем была изучена детерминация нормативного и отклоняющегося поведения несовершеннолетних группы "риска" с помощью новых психодиагностических методик.

**Теоретическое значение исследования** заключается в том, что выявленные благодаря анализу полученных результатов новые научные данные и закономерности могут способствовать выработке установок и взглядов на диагностику, профилактику и психокоррекцию причин возникновения

отклоняющегося поведения у несовершеннолетних группы "риска", а также обогащает имеющиеся у нас теоретические представления о начальной стадии формирования делинквентной личности в рамках концепции отклоняющегося социального поведения.

**Прикладное значение исследования** заключается в том, что в практическом плане результаты исследования могут быть эффективно использованы как в воспитании, так и при усовершенствовании и улучшении работ, направленных на профилактику правонарушений и преступлений в подростковой и юношеской среде.

Во **"Введении"** обосновывается актуальность темы, представлена научная гипотеза исследования, сформулированы основные цели, задачи, теоретико-методологические основы и методы. Представлены теоретическое и прикладное значения, научная новизна работы, положения, выносимые на защиту.

**Первая глава- "Группы "риска" несовершеннолетних как проблема психологического исследования"** посвящена характеристике теоретических основ проблемы отклоняющегося поведения у несовершеннолетних группы "риска", анализируются подходы к проблеме несовершеннолетних группы "риска" в различных эпохах – от античности до наших дней, дается обзор точек зрения представителей разных психологических школ по поводу понятия "группа риска".

Во **второй главе- "Экспериментальное изучение девиантного поведения у несовершеннолетних группы "риска"** – дается общая характеристика несовершеннолетних группы "риска", использованных в исследовании понятий, выявляются и уточняются границы их применения, затем подробно излагаются условия организации экспериментального изучения, представляется методический аппарат исследования, а также результаты исследования, которые резюмируются с помощью психологического анализа.

В **третьей главе- "Пути предупреждения и преодоления девиантного поведения у несовершеннолетних группы "риска"** – представлено соотношение между нормативным и девиантным поведением у несовершеннолетних группы "риска", затем даются мотивация девиантного поведения у несовершеннолетних группы "риска" и методологические рекомендации по проведению исправительных работ с детьми девиантного поведения.

Работа завершается **общими выводами**. По теме диссертации опубликовано пять научных работ.





